



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

95 18

ՆԱԽԿԻՆ ՎԱՐԳԱԳԵՏ
ՈՐԵԼ ՆՈՉՈՐԵԱՆԻ

« Ի Ն Չ ՈՒ Ի Հ Ե Ռ Ա Յ Ա »

ԳՐԳՈՑԿԻՆ ԱՌԹԻՒ

Հրատարակուածիւն

Ս. ԷՋՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

1925

ՏՊԱՐԱՆ «ԱՐՁԱԳԱՆԳ ՓԱՐԻՋԻՒԻ»

227, Bd. Raspail

Փ Ա Ր Ի Ջ

281.69
G-15 G.

Յ Գրույ Գրքարան աստուծոյ Գրքարան
Ս 4. ՈՂԻ 2009
Պարբերական

281.64
Գ-15Գ.

ԱՐԵՆ ԵԱԶԱՐԵԱՆԻ (Նախկին վարդապետ)
«ԻՆՁՈՒ ՀԵՌԱՅԱ» ԳՐԳՈՅԿԻՆ ԱՌԹԻԻ

Արել Նազարեան (մինչեւ 1922 թ. Արրահամեան) նախկին Ծ. Վարդապետը վերջերս երեւանում հրատարակել է մի բրոշուր «Ինչո՞ւ հեռացա» վերնագրով, տպել է «Խորհրդային Հայաստան» թերթում նախկին Աշոտ Եպիսկոպոսի (այժմ Նիկող. Շախեանի) «Այլասեռուած Կրօնը» գրքոյկին առթիւ հակակրօնական եւ յատկապէս Հայոց եկեղեցու դէմ ուղղուած մի յօդուած եւ այժմ «աշխատում է» թղթակիցներ զտնել Խորհրդային Հայաստանում հակակրօնական թերթ հրատարակելու համար . . . :

Ընդհանրապէս դիտուած է, որ իր կոչումը թողնող հոգեւորականը, երբ ցանկանում է իր հեռանալուն տալ սկզբունքային գոյն կամ գաղափարական մի բացատրութիւն, որը ինքնըստինքեան շատ գրաւիչ է եւ մանաւանդ գայթակղեցուցիչ, այդ անում է կամ հեռանալիս եւ կամ հեռանալուց անմիջապէս յետոյ: Սակայն Արել Նազարեանը վարդապետութիւնը թողնելուց եւ մօտ մէկ ու կէս տարի արտասահմանում լուելուց յետոյ, որտեղի Հայ մամուլը նրա յայտնի սխրագործութեան առթիւ միաբերան դատապարտում էր նրան, որակելով նրա այդ արածը ամենաձանր խօսքերով, այժմ միայն, Խորհրդային Հայաստան գալով, կարիք է զգացել իր հոգեւոր կոչումից հեռանալը «լուսաբանել» 17 երեսանոց գրքոյկով եւ թունդ հակակրօնական ընթացք բռնել եւ թշնամական դիրք՝ դէպի յատկապէս Հայոց եկեղեցին եւ Ս. Էջմիածինը: Այդ գրքոյկը աւելի շուտ Արել Նազարեանի ինք.

նակենսագրութիւնն ու «մեղայագիրն» է, հակասութիւններով լի, որ ամեն մի ուշադիր ընթերցող հեշտութեամբ կը նկատի: Իր հոգեւոր կոչումից հեռանալուն աշխատում է վերագրել «հիմնաւոր» եւ «լուրջ» պատճառներ, ուստի եւ գրում է, — «Կեանքը եւ տարիների փորձառութիւնը մի կողմից, մեր զիտական մտածութեան զարգացումը միւս կողմից, մեզ ցոյց են տւել, որ Հայոց եկեղեցին այն չէ, ինչ որ մենք ենք կարծել, ուստի եւ շատերս հեռացել ենք նրանից միանգամայն հիասթափւած» (երես 6): Եւ իր հիասթափութեանը, ի հարկէ, հասարակական նշանակութիւն էլ է վերագրում:

Սակայն հարց է, արդեօք ե՞րբ է հիասթափւել եւ ե՞րբ է համոզւել, որ հայ եկեղեցին վնասակար է եւ ի՞նչ պայմաններումն է հեռացել հայ եկեղեցուց: Գուցէ «գիտական մտածողութեան զարգացմամբ» ուճացած եւ «տարիներու փորձառութեամբ» մարզւած Արեւի Նազարեանը ցոյց տայ նաեւ տարեթիւր եւ մինչեւիսկ օրը, թէ՛ ե՞րբ է սկսել իր «նոր կեանքն» ու «նոր օրիենտացիան», քանի որ «վերջիվերջոյ եկել եմ այն համոզման» (երես 7), «վերջիվերջոյ բերին ինձ այն համոզման» (երես 9), «ինձ վերջնակապէս համոզել են» (երես 13), «բազմիցս համոզւելուց յետոյ» (երես 17) եւ այլն այսպիսի դարձուածքներ, աւելի շուտ զրոյի անորոշ հոգեկան վիճակի, պատէպատ ընկնելու եւ կեղծիքի նշաններ են: Ստորեւ այս կէտը միանգամայն կը պարզուի:

Յիշեալ գրքոյկից իմանում ենք, որ Արեւի նախկին վարդապետ Նազարեանը տասներկու տարի շարունակ, ինչպէս ինքն է շեշտում, «ամբողջ հոգևով» աշխատել է հայ եկեղեցու համար եւ նոյնպիսի հոգևով կուել է նոյն եկեղեցու հակառակորդների եւ թշնամիների դէմ (երես 7):

Յայտնի է, որ Արեւի Նազարեանը արեղայ է ձեռնսդրւել էջմիածնում 1911 թւին: Իր գրածի համաձայն 12 տարի ծառայել է Հայոց եկեղեցուն «ամբողջ հոգևով», հաւատարմութեամբ, ուրեմն մինչեւ 1923 թ. սկիզբները: Իսկ պաշտօնական գործերից, յատկապէս

Լոնտոնի Հայ գաղութի ընդհանուր ժողովի եւ Ն. Կ. ի գրաւոր բողոքներից Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով, երեւում է, որ Արեւի Նազարեան նախկին վարդապետը 1923 թւի փետրւարի 5-ի առաւօտեան Լոնտոնից «գաղտագողի» փախել է Լոնտոնի եկեղեցու հոգաբարձու Ն. Կ. ի կնոջ հետ Փարիզ, ապա Բերլին եւ նոյն օրը (փետրւար 5-ին) Վեհափառ Կաթողիկոսի անունով մի գրութեամբ էլ հրաժարուել է հոգեւոր կոչումից շատ որոշ պատճառաբանութեամբ: Այդ հրաժարագիրը ուղարկւել է Բերլինի փոստատան միջոցով:

Գրաւոր տեղեկութիւններից պիտի ենթադրել, որ այդ կնոջ հետ փախչելուց եւ յատկապէս Խորհրդային Հայաստան գալուց յետոյ, դուցէ, «վերջիվերջոյ համոզւել է», որ հայ եկեղեցին վնասակար է, ուստի եւ սկսել է կուել հայ եկեղեցու դէմ, ի հարկէ կրկին «ամբողջ հոգով». . . :

Եւ Արեւի Նազարեան իր գրքոյկով այժմ միայն «մեղադրանքներ» ու «սպառնալիքներ» է կարդում առանձին եռանդով հայ եկեղեցու, հայ հոգեւորականութեան եւ էջմիածնի հասցէին: Այժմեան միջավայրի համեմատ էլ «յարմարաւոր» նախադասութիւններ ու մտքեր է արտայայտում— «շահադրժող հարուստ վաշխառուի», «հայ բուրժուազիաի», «հարուստ աղաների» եւ «նախկին ռեժիմի հայ մտաւորականութեան» հետ հայ եկեղեցու դաշնակցելու մասին: Ի հարկէ, զորձածելով նաեւ մէջ ընդ մէջ «հայ աշխատաւորութիւն», «գիւղացիութիւն» մինչեւիսկ «մարդկային ամեն արժանապատուութիւն կորցրած», խարերայութիւն, կեղծիք ու աչքակապութիւն եւ այլն, որոնք կարողանում է կապել իր եկեղեցուց հեռանալու հետ:

Եւ, ի հարկէ, ամենեւին չի էլ քաշում նոյնիսկ հրապարակով քաղաքական զրպարտութիւններ անելուց հայ եկեղեցուց, հայ հոգեւորականութեան հասցէին, «նոյնիսկ այսօր, գրում է նա, այլեւս ամեն կասկածից վեր է, որ հայ ժողովուրդի կեանքն ու զարգացումը հնարաւոր է միայն խորհրդային կարգերի եւ սոցիալիստական հանրապետութիւնների համամիու-



28 631-60

նակենսագրութիւնն ու «մեղայագիրն» է, հակասութիւններով լի, որ ամեն մի ուշադիր ընթերցող հեշտութեամբ կը նկատի: Իր հոգեւոր կոչումից հեռանալուն աշխատում է վերագրել «հիմնաւոր» եւ «լուրջ» պատճառներ, ուստի եւ գրում է, — «Կեանքը եւ տարիների փորձառութիւնը մի կողմից, մեր գիտական մտածութեան զարգացումը միւս կողմից, մեզ ցոյց են տւել, որ Հայոց եկեղեցին այն չէ, ինչ որ մենք ենք կարծել, ուստի եւ շատերս հեռացել ենք նրանից միանդամայն հիասթափւած» (երես 6): Եւ իր հիասթափութեանը, ի հարկէ, հասարակական նշանակութիւն էլ է վերագրում:

Սակայն հարց է, արդեօք ե՞րբ է հիասթափւել եւ ե՞րբ է համոզւել, որ հայ եկեղեցին վնասակար է եւ ի՞նչ պայմաններումն է հեռացել հայ եկեղեցուց: Գուցէ «գիտական մտածողութեան զարգացմամբ» ուճացած եւ «տարիներու փորձառութեամբ» մարզւած Արեւ Նազարեանը ցոյց տայ նաեւ տարեթիւր եւ մինչեւիսկ օրը, թէ՛ ե՞րբ է սկսել իր «նոր կեանքն» ու «նոր օրիենտացիան», քանի որ «վերջիվերջոյ եկել եմ այն համոզման» (երես 7), «վերջիվերջոյ բերին ինձ այն համոզման» (երես 9), «ինձ վերջնակապէս համոզել են» (երես 13), «բազմիցս համոզւելուց յետոյ» (երես 17) եւ այլն այսպիսի դարձուածքներ, աւելի շուտ գրողի անորոշ հոգեկան վիճակի, պատէպատ ընկնելու եւ կեղծիքի նշաններ են: Ստորեւ այս կէտը միանգամայն կը պարզուի:

Յիշեալ գրքոյկից իմանում ենք, որ Արեւ նախկին վարդապետ Նազարեանը տասներկու տարի շարունակ, ինչպէս ինքն է շեշտում, «ամբողջ հոգևով» աշխատել է հայ եկեղեցու համար եւ նոյնպիսի հոգևով կուել է նոյն եկեղեցու հակառակորդների եւ թշնամիների դէմ (երես 7):

Յայտնի է, որ Արեւ Նազարեանը արեղայ է ձեռնսդրւել էջմիածնում 1911 թւին: Իր գրածի համաձայն 12 տարի ծառայել է Հայոց եկեղեցուն «ամբողջ հոշուով», հաւատարմութեամբ, ուրեմն մինչեւ 1923 թ. սկիզբները: Իսկ պաշտօնական գործերից, յատկապէս

Լոնտոնի Հայ գաղութի ընդհանուր ժողովի եւ Ն. Կ. ի գրաւոր բողոքներից Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով, երեւում է, որ Արեւ Նազարեան նախկին վարդապետը 1923 թւի փետրւարի 5-ի առաւօտեան Լոնտոնից «գաղտագողի» փախել է Լոնտոնի եկեղեցու հոգաբարձու Ն. Կ. ի կնոջ հետ Փարիզ, ապա Բերլին եւ նոյն օրը (փետրւար 5-ին) վեհափառ Կաթողիկոսի անունով մի գրութեամբ էլ հրաժարուել է հոգեւոր կոչումից շատ օրոշ պատճառաբանութեամբ: Այդ հրաժարագիրը ուղարկւել է Բերլինի փոստատան միջոցով:

Գրաւոր տեղեկութիւններից պիտի ենթադրել, որ այդ կնոջ հետ փախչելուց եւ յատկապէս Խորհրդային Հայաստան գալուց յետոյ, գուցէ, «վերջիվերջոյ համոզւել է», որ հայ եկեղեցին վնասակար է, ուստի եւ սկսել է կոուել հայ եկեղեցու դէմ, ի հարկէ կրկին «ամբողջ հոգով» . . . :

Եւ Արեւ Նազարեան իր գրքոյկով այժմ միայն «մեղադրանքներ» ու «սպառնալիքներ» է կարդում առանձին եռանդով հայ եկեղեցու, հայ հոգեւորականութեան եւ էջմիածնի հասցէին: Այժմեան միջավայրի համեմատ էլ «յարմարաւոր» նախադասութիւններ ու մտքեր է արտայայտում—«շահագործող հարուստ վաշխառուի», «հայ բուրժուազիաի», «հարուստ աղաների» եւ «նախկին ռեժիմի հայ մտաւորականութեան» հետ հայ եկեղեցու դաշնակցելու մասին: Ի հարկէ, զորձածելով նաեւ մէջ ընդ մէջ «հայ աշխատաւորութիւն», «գիւղացիութիւն» մինչեւիսկ «մարդկային ամեն արժանապատուութիւն կորցրած», խաբէրայութիւն, կեղծիք ու աչքակապութիւն եւ այլն, որոնք կարողանում է կապել իր եկեղեցուց հեռանալու հետ:

Եւ, ի հարկէ, ամենեւին չի էլ քաշւում նոյնիսկ հրապարակով քաղաքական գրաւորութիւններ անելուց հայ եկեղեցուց, հայ հոգեւորականութեան հասցէին, «Նոյնիսկ այսօր, գրում է նա, այլեւս ամեն կասկածից վեր է, որ հայ ժողովուրդի կեանքն ու զարգացումը հնարաւոր է միայն խորհրդային կարգերի եւ սոցիալիստական հանրապետութիւնների համամիւ-



28 631-60

300

թեան մէջ, դարձեալ հայ եկեղեցու աչքը դուրսն է, դարձեալ նա խորթ է համարում այն իրաւակարգը, որի մէջ Հայաստանի աշխատաւոր մասսաները ազատ շունչ են քաշում, հազիւ ազատուած եկեղեցու բռնութիւններէից ու հարստահարութիւններէից» (երես 16):

Ի՞նչ անուն տալ Աբել Նազարեանի այս ակնյայտների զրպարտութեան, թո՛ղ ընթերցողը որակի . . .

Սակայն «Ինչո՞ւ հեռացա» զրքոյկի հեղինակը ո՛չ միամիտ է ո՛չ էլ տգէտ, այլ զարգացած, բաւական էլ ճարպիկ, Յ6 տարեկան եւ «տարիների փորձառութիւն» ու «գիտական մտածողութեան զարգացում» ունեցող անձն: Յամենայն դէպս շա՛տ լաւ գիտէ թէ՛ ի՞նչ է զրում եւ ինչո՞ւ համար: Եւ այնքան էլ թոյլ յիշողութեան տէր չէ կարելի համարել, որ մոռցած լինի թէ՛ ի՞նչ է զրել 2—3 տարի առաջ եւ արդեօք, նոյնիսկ այդ մօտիկ անցեալում, մի որեւէ հեռաւոր ակնարկ գոնէ արե՞լ է այն ձեւով ու տոնով (չենք ասում դեռ մտքերով), ինչ որ այսօր հրապարակով է զրում եւ «աշխատում է» ծուռումուռ, աններելի միջոցներով ապացուցանել . . .

Ի՞նչն է ստիպել արդեօք նրան հրատարակել զրպարտութեամբ, ամբոխավարական տրամաբանութեամբ եւ կեղծիքով լի մի զրքոյկ . . .

Միանգամայն աւելորդ աշխատանք համարելով մի այսպիսի զրքոյկի կէտ առ կէտ քննելն ու հերքելը եւ այս առթիւ ապարդիւն բանավէճի մէջ մտնելը, կը բերենք այստեղ միմիայն փաստացի քաղաւածքներ Աբել Նախկին վարդապետ Նազարեանի՝ ի՛ր իսկ պաշտօնական զրութիւններից ու զեկուցումներից:

Այդ քաղաւածքների եւ նրա «Ինչո՞ւ հեռացա» զրքոյկի եւ այժմեան հակաեկեղեցական յօդուածների ու նրա բռնած դիրքի համեմատութիւնից պարզ կարելի է բնորոշել Աբել Նազարեանի տիպը, եւ ակնյայտնի կերեւայ թէ՛ իսկապէս ինչո՞ւ է հեռացել նա հոգեւոր կոչումից: Թերեւս այդ համեմատութիւնից էլ Աբել Նազարեանը գիտակցի կամ գո՛նէ զգայ, որ երբեմն որոշ հարցերի մասին լռելն էլ պահանջում է քաղա-

քացիական քաջութիւն որոշ պայմաններում եւ մարդկային տարրական պատուազգացութիւն...:

1920 թւի Օգոստոսի 3ին Լոնտոնի նախկին հոգեւոր հովիւ Աբել Մ. Վարդապետ Աբրահամեանը (այժմեան Աբել Նազարեանը) յանուն Վեհափառ Կաթողիկոսի ուղարկած ինքնազիր տեղեկագրից քաղուածներ (Հայրապետական Դիւանի գործերից):

Մի տարու չափ Մարտէյլի հոգեւոր հովիւ է եղել, որտեղ ընդհարել է, Մուշեղ Արքեպիսկոպոսի հետ, չնքը այդ միջադէպը հետեւեալ կերպով է նկարագրում. «Մուշեղ Արքեպիսկոպոսը իր Մարտէյլ հասնելուց առաջ Փարիզի «Վերածնունդ» հանդէսի մէջ հրատարակեց (1917 թ. թիւ 6) «Կոյր Աստուածը» վերնագրով ոտանաւոր, որը բացարձակ ժխտումն էր մեր եկեղեցու դաւանանքի ինչպէս եւ քրիստոնէական վարդապետութեան ընդհանրապէս:

«Յիշեալ արքեպիսկոպոսը կեղծ ազգասիրական քողի տակ առանց հաշւի աւնելու իր կոչումը ու աստիճանը, թոյլ էր տուած իրեն հետեւեալ արտայայտութիւններն անել Աստուծու հասցէին».
«Անունդ ու փառքդ եղան անիմաստ... անմահութիւնդ վէրք ստացաւ անհամար... քան քու դաւակը, ազգս արդար է իրաւ որ... եւայլն...»

«Նկատելով այս ոտանաւորը որպէս ամբարիշտ մարդու արարք, հոգաբարձութիւնը (Մարտէյլի) եւ ես որոշեցինք չհրաւիրել Արքեպիսկոպոսը մեր մատրան մէջ Ս. Ծննդեան պատարագ մատուցանելու, երբ նրա մի քանի բարեկամներն առաջարկեցին այդ...».
«այս բանավէճի մանրամասնութեանց յիշատակումը շատ հեռու կը տանի ինձ: Միայն այսքանը ասեմ, որ արտասահմանի Հայ մամուլը (Արմէնիա, Կոչնակ, Տաւրոս, Հայրենիք եւայլն) իրաւացի գտան հանդէպ Մուշեղ Արքեպիսկոպոսի բռնած իմ ընթացքը»:

Այսպիսով, ուրեմն, նախկին Աբել Վարդապետ Նազարեանը պաշտպանում է Հայոց եկեղեցու դաւանանքը եւ ընդհանրապէս քրիստոնէական վարդապետութիւնը, «ամբողջ հոգով» մաքառելով մոլորած

հոգեւորականի դէմ եւ մինչ իսկ զրկում է նրան պատարագ մատուցանելու իրաւունքից:

Իսկ այժմ... այլ դերի մէջ է. նոյնպէս «ամբողջ հոգով» է մաքառում, բայց միայն իր պաշտպանած Հայ եկեղեցու եւ հայ եկեղեցականութեան դէմ, շարժողութիւնով հակակրօնական յօդուածներ: Ո՞րն է կեդիքն ու աչքակապութիւնը եւ ո՞րը անկեղծ, արդեօք այժմեան «Ինչո՞ւ հեռացա» գրքո՞յկը թէ նախկին վարմունքն ու գրուածները, որ ինքնաբերաբար է գրել...:

Մինչեւ 1925 թւի Փետրւարի 3ը գրաւոր կերպով ջատագովել ու փառաբանել է Հայաստանեայց եկեղեցին, իսկ այժմ վարկաբեկելու հիւանդութեամբ բռնւած իրաւագէտ Աբէլ Նազարեանը, բերում է «փաստեր» որոնցից մէկը հետեւեալն է. 1912 թւի (ոչ թէ 1911 թւի) մեռնօրհնութեան դէպքն է պատմում բաւական երեսայամիտ ու կեղծ ձեւով, որպէս թէ շա՛տ է գաղթակղել եւ ամբողջ դիշերը անքուն է անցկացրել, մինչ իսկ խիղճը տանջւել է «ստոր խաբեբայութիւնը» տեսնելով (երես 9): Բայց եւ այնպէս խղճի ամենայն անդորրութեամբ եւ խոր համոզմունքով շարունակել է Հայոց եկեղեցուն ծառայել «ամբողջ հոգով» եւ «ամբողջ սրտով»:

Փոխանակ մի անյայտ ծերունի միաբանի ասածները, եթէ այն էլ ճշմարիտ է, իբրեւ փաստ բերելու, գո՛նէ ունենար այս փոքր դէպքում բարեխղճութիւն լռելու, քանի որ անշուշտ կարգացել է իր ուսուցիչ գիտնական Կարապետ եպիսկոպոս Տէր Մկրտչեանի «միւռոնի օրհնութիւն» աշխատասիրութիւնը:

Դժբախտաբար այդպիսի մարդկանցից բարեխղճութիւն կամ ազնուութիւն պահանջելը շատ դժուար է, քանի որ իբրեւ սկզբունք ընդունել են Calomniez, calomniez, il restera quelque chose»- «գրպարտեցէք, գրպարտեցէք, մի որ եւէ բան կը մնայ տակը»:

Երեք տարի առաջ, 1921 թւին, Մանչէսթրի Հայոց Յանձնաժողովը ուղարկել էր մի հազար անգլիական ֆունտ ստերլինգ յօգուտ Էջմիածնի անգլիացի Մր. Հարկորդի միջոցով, որը Երեւանում անգլիական

որբանոցի լիագօրն էր. Մր. Հարկորդը ենթադրել էր թէ՛ այդ գումարը Էջմիածնի օգտին չէ. մի հասարակ թիւրիմացութիւն, որը շուտով պարզւեց: Այդ գումարի առթիւ Աբէլ Նազարեան նախկին վարդապետը 1922 թ. Փետրւարի 17ին գրութեամբ յայտնել էր Վեհափառ Կաթողիկոսին Մանչէսթրից իր ստացած նամակից հետեւեալը. «Մեր անցեալ երկուշաբթի օրուայ նիստի մէջ քուէարկեցինք հազար ոսկու գումար մը ի նպաստ Կաթողիկոսարանի պիտոյից եւ որոշեցինք ապահով եւ յարմար միջոցով մը նոյնը յայտնել նորին Սուրբ Օծութեան ազգիս սիրեցեալ Վեհափառ Կաթողիկոսին», եւ Աբէլ նախկին վարդապետը շարունակում է- «Ահա այս գումարն է, որ անցեալ Յուլիսի սկիզբներին, երբ Մր. Հարկորդ Հայաստան էր գալիս, իրեն տրւեց Ձերդ Վեհափառութեան յանձնելու համար»: «Թէեւ հարցը շատ պարզ է, բայց եւ կրկին գրում եմ Մանչէսթր, որ վերստին գրեն Մր. Հարկորդին թէ՛ իրեն տրւած հազար ոսկին Սուրբ Էջմիածինի համար է եւ ոչ ուրիշ»:

Այս նոյն գումարի առթիւ, դեռ 1921 թ. Յուլիսի 28ի նամակի մէջ յանուն Վեհափառ Կաթողիկոսի Մանչէսթրից, գրել էին. «Յանձնաժողովն ցաւած սրբտով տեղեկացած լինելով մեր բազմեբախտ եւ պատկառելի Մայր-Աթոռի նիւթական անձուկ վիճակը, որոշեց միաձայն իր երէկուայ նիստին մէջ ուղարկելու Ձերդ Վեհափառ Տիրոջ Ս. Օծութեան մի հազար անգլիական ոսկի»:

Նոյն 1921 թւին Աբէլ նախկին վարդապետ Նազարեանը Լոնտոնում հաւաքել էր յօգուտ Էջմիածնի գումար եւ այդ «Էջմիածնանպաստ հանգանակութիւնից» փոխադրել էր հինգ հարիւր անգլիական ֆունտ ստերլինգ կրկին Մր. Հարկորդի միջոցով Վեհափառ Կաթողիկոսի անունով, որի մասին յայտնում է 1921 թւի Նոյեմբերի 13ի գրութեամբ պաշտօնապէս:

Ահա այսպէս է գրել երեք տարի առաջ Աբէլ նախկին վարդապետը՝ եւ շեշտել իր գրութեան մէջ, որ «Հարցը շատ պարզ է». իսկ այժմ իր «Ինչո՞ւ հե-

նացա» զըքոյկում իրողութիւնը աղաւաղումէ՝ ընթերցողներին մոլորեցնելու նպատակով եւ ըստ այնմ անտեղի ակնարկներ անում եւ զըպարտում Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Իրզապատճառը պարզ է. «Քրոնտը» փոխել է եւ ինքնակենսագրական «մեզայագիրը» աշխատում է լցնել այսպիսի գիտակցական աղաւաղումներով ու զըպարտութիւններով, ամենին եւ նախ իրեն լաւ յայտնի կեղծիքը՝ (հոգեւոր կոչումից իր հեռանալուն սկզբունքային բացատրութիւն տալը), ճշմարտի փոխարէն մի կերպ անցկացնելու համար, որ անհնարին է:

Աբել Նազարեան նախկին վարդապետը հետեւեալ կերպով է նկարագրում իր պաշտօնավարութիւնը Լոնտոնում. «1919 թւի Մարտին ստացայ Լոնտոնի Հայոց Հոգաբարձութեան կողմից մի զըրութիւն, որով հրաւիրում էին ինձ ստանձնել տեղի հովուութեան պաշտօնը: Թէեւ մտադիր չէի նոր պաշտօնով կապւել, որեւէ տեղի հետ մինչեւ Ս. Էջմիածին դառնալս, ինչպէս որ զըբանից առաջ Ամերիկայից ստացած մի ուրիշ հրաւէր մերժեցի, սակայն մի հարց ստիպեց ինձ ընդունել Լոնտոնի հովուութիւնը. դա Լոնտոնի հայ եկեղեցիի հիմնելու խնդիրն էր, որի պատճառով ստանձնեցի այդ պաշտօնը եւ ահա մի եւ կէս տարի է որ վարում եմ այն»:

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Գործիս այս մասի հիմքը կազմում է եկեղեցու խնդիրը, որ առաջին օրուանից իսկ ձեռք առա»:

«Կանոնագրի մէջ մտցրած եմ իմիջի այլոց եւ մի կէտ, ըստ որի եթէ ապագային Լոնտոնի հայ գաղութը այնքան նուազի որ այլ եւս չգագցուի հայ եկեղեցու պէտքը, հիմնարկութիւնը իր շարժական եւ անշարժ գոյքով տրամադրելի պիտի լինի Ս. Էջմիածինի Վեհափառ Կաթողիկոսին եւ ենթակայ նրա տնօրինութեան:

«Աւելորդ չեմ համարում յիշել անցեալ Մայիսի 14ի Լոնտոնի հայոց ընդունած մի բանաձեւը, որը իր

մէջ խտացնում է անգլիահայոց մտածելակերպն ու զգացմունքները եւ որ կցւած է եկեղեցու շինութեան մատենին հոգաբարձութեան ատենապետի եւ իմ ստորագրութեամբ: Ահա այդ բանաձեւը:

«1919 թւի Մայիսի 13ին զուամբւած Լոնտոնի Հայոց գաղութի ընդհանուր ժողովը ինկատի ունենալով, որ Լոնտոնի Հայ գաղութը հանդէպ եկեղեցու եւ ազգին ունեցած իր մի շարք էական պարտականութեանց անթերի կատարման մէջ մեծ խոչնդոտների է հանդիպում, զլիաւորապէս սեփական եկեղեցի չունենալու պատճառով եւ նպատակ ունենալով մշտական կարելիութիւն ձեռք բերել՝

ա. մխիթարելու գաղութի հոգեպէս.

բ. ի մի համախմբելու գաղութիս ցրւած անդամները եւ վառ պահելու նոցա մէջ Աւետարանի կենդանի խօսքը, մեր եկեղեցու սրբազան աւանդութիւնը եւ ազգային ոգին.

գ. աւելի լրջօրէն հոգ տանելու գաղութիս մանուկ սերնդի ազգային կրթութեան եւ դաստիարակութեանը, դ. աւելի հաստատուն եւ տեւական դարձնելու գաղութիս կապը Մայր Հայրենիքի եւ եկեղեցական բարձրագոյն իշխանութեան հետ.

ե. եւրոպական աշխարհին աւելի ցայտուն կերպով ներկայացնելու մեր ազգային եկեղեցական ինքնուրոյնութիւնը.

Որոշեց հանգանակութիւն բանալ եւ ըստ կարելոյն շուտով ձեռք բերել գաղութիս համար սեփական եկեղեցու շէնքը»:

«Այս բանաձեւից, Վեհափառ Տէր, կարող էք եզրակացնել նաեւ ա՛յն թէ՛ որքան մեծ նշանակութիւն ունի Լոնտոնի հայ եկեղեցին ո՛չ միայն ներքին գաղութային, այլ եւ համայն ազգային եկեղեցական տեսակէտից այնպիսի մի քաղաքում որը լինելով Իրիտանական լայնածաւալ կայսրութեան մայրաքաղաքը, դարձած է նաեւ ամբողջ աշխարհի մայրաքաղաքը: Ահա թէ ինչո՞ւ ամբողջ սրտով փարած եմ Լոնտոնի հայ եկեղեցու խնդրին, որի իրականացումն արդէն կիսով չափ ապահովւած է»:

Այդպիսի համոզմունք է ունեցել Աբել նախկին վարդապետ Նազարեանը ընդհանրապես Հայոց եկեղեցու նշանակութեան մասին եւ մինչ իսկ Լոնտոնի հայոց եկեղեցուն վերագրում է համազգային նշանակութիւն:

Իսկ ա՞յժմ... միջոցների մէջ ո՛չ մի խտրութիւն չգնելով, աղաւաղած եւ այլանդակած «փաստերով» կրկին «ամբողջ սրտով» մաքառում է Հայաստանեայց եկեղեցու եւ զլիսաւորաբար էջմիածնի դէմ:

Աբել նախկին վարդապետը, Աբրահամեան ազգանունով, (այժմ Նազարեան), հրատարակել է 1920թ. անգլիերէն մի աշխատութիւն. THE CHURCH AND FAITH OF ARMENIA (Հայաստանեայց եկեղեցին եւ հաւատքը) վերնագրով:

«Հայոց եկեղեցու էական կողմերը շօշափող եւ հիմնական սկզբունքները ներկայացնող մի գիրք»¹, ինչպէս ինքն է գրում իր զեկուցագրում:

Առաջին երեսի վրայ իր ամբողջական պատկերն է պատարագիչի գգեստով: Այնուհետեւ 75 երեսի վրայ նկարագրում է Հայոց եկեղեցու համառօտ պատմութիւնը. թուում է Հայոց եկեղեցու կատարած խոշոր դերն ու գործերը՝ ազգային կրօնական, կրթական—կուլտուրական եւ քաղաքական կեանքում: Յիշում է, որ դարերի ընթացքում Հայոց եկեղեցին պահպանել է ազգի միութիւնը, ամբողջութիւնը, զօրեղ ներքին կապ լինելով ցրուած հայութեան մէջ եւ զարգացրել ու պահպանել է մեր ազգային քաղաքակրթութիւնը:

Եւ շնորհիւ այդպիսի զօրեղ կապերի, հայ եկեղեցին, ինչպէս գրում է, «այսօր դարձել է կատարելապէս ազգային ու դեմոկրատիկ եկեղեցի» (The Armenian church has become to-day a completely national and democratic church) երես 30:

Այդ գրքի վերջին գլուխը (է. երես 68—75) The Liberation of Armenia (Հայաստանի ազատութիւնը) մի կատարեալ ջատագովութիւն է հայոց եկեղեցու: Նոյն ոգով են գրուած եւ միւս գլուխները:

Իսկ Organisation of Armenian Church (Հայոց

եկեղեցու կազմակերպութիւնը) զլիսի մէջ յատկապէս շեշտում է եւ ընդգծում, որ դարերով շարունակ, ինչպէս եւ ներկայ համաշխարհային պատերազմի ընթացքում, հայ եկեղեցականութեան դեպիցը եղել է «for the people and with the people in everything» այսինքն՝ « ժողովրդի համար եւ ժողովրդի հետ ամեն գործում » (երես 59):

Այնուհետեւ յիշելով մօտ մի միլիոն հայերի նահատակութիւնը, որոնց թւում մօտ 1200 եպիսկոպոսների եւ քահանաների, վերջինների վերաբերմամբ արդարացած է տեսնում սուրբ գրքի պատուէրը՝ « Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց »:

Իր այս ամբողջ գրքի մէջ ընդհանրապէս Հայոց եկեղեցու եւ հայ եկեղեցականութեան մասին այսպիսի յափշտակութեամբ եւ ջատագովութեամբ գրողը, այժմ, իր «Ինչ՞՞նչ հեռացա» գրքոյկով եւ յատկապէս Հայոց եկեղեցու ու եկեղեցականութեան դէմ աններելի զէնքերով մաքառելով, բաց է բաց ժխտում է այդ ամենը եւ յայտարարում, որ հայ եկեղեցին « շատ վնասակար է եղել եւ վնասակար էլ պիտի լինի, որքան ժամանակ որ նա գոյութիւն ունենայ »: (երես 7):

Որի՞ն հաւատանք, սա ի՞նչ ինքնախարագանումն է:

Բայց դեռ շարունակենք Աբել նախկին վարդապետի տեղեկագրից քաղուածներ:

«Յարաբերութիւններ անգլիական կղերի հետ: Այս խնդրին շատ մեծ կարեւորութիւն տուի հէնց առաջին օրից: Ծանօթութիւն հիմնեցի Քենթրբըրիի արքեպիսկոպոսի, Լոնտոնի եպիսկոպոսի, Մանչեստրի եպիսկոպոսի եւ ուրիշ շատ ակնաւոր եկեղեցականներու հետ: Այս ծանօթութիւնները մեծ օգուտներ ունեցան եւ ունին:»

«Այս յարաբերութեանց պահպանումը եւ զարգացումը շատ մեծ նշանակութիւն ունի մեզ համար թէ՛ ներկայի եւ թէ՛ մանաւանդ ապագայի տեսակէտից »:

«Անգլիական եկեղեցին մեծ համակրանք ունի մեր ազգի եւ եկեղեցու հանդէպ. նա մեծ ջանքեր թափեց ազգելու խաղաղութեան վեհաժողովին եւ կառավարութեան վրայ ի նպաստ մեզ »:

«Այս գնահատելի աշխատանքի մանրամասն յիշատակումը ինձ շատ հետու կը տանի»:

Այնուհետև լայտնում է, որ Օքսֆորտ է գնալու, «Օքսֆորտում աստուածաբանական դասընթացքների հետևելով միասին, պիտի շարունակեմ տեղիս (Լոնտոնի) հովուութեան պաշտօնը: Նկատելով, որ իմ Օքսֆորտ լինելովը ոչ միայն անգլիական աստուածաբանական գիտութեանը մօտիկից պիտի ծանօթանամ, այլ եւ առիթ պիտի ունենամ Անգլիական գիտութեան, եկեղեցական եւ քաղաքական ասպարէզների մէջ երեւացող մեծ դէմքերի հետ ծանօթութիւններ հաստատել, ինչ որ անպայման մեծ օգտակարութիւն պիտի ունենայ իմ ապագայ եկեղեցական գործունէութեան մէջ»:

Հոգեւոր կոչումը թողնելուց երկու եւ կէս տարի առաջ, 33 տարեկան հասակում, «գիտական մտածողութեամբ» եւ «տարիների փորձառութեամբ» մարդուած Աբել Նազարեան, միանգամայն ինքնաբերաբար ու ինքնակամ աստուածաբան դարձողը, իր ապագայ եկեղեցական գործունէութեան մասին լուրջ մտածողն ու ծրագրի կազմողը եւ վերջապէս անգլիական կղերականութեան հետ ծանօթալուն շատ մեծ կարեւորութիւն տուողը, այսօր իր «Ինչո՞ւ հեռացա» գրքոյկով եւ հակաեկեղեցական յօդուածներով դժուար բացատրելի գունափոխութեան եւ կերպարանափոխութեան է ենթարկւել:

1921 թւի նոյեմբեր 15-ի գրութեամբ վեհափառ Կաթողիկոսի անունով վարդապետ Նազարեանը խնդրում է պարզեւատրել Հայրապետական շքանշանով մի երկու ազգային գործիչների եւս. — «Ի նկատի ունենալով ազգային շահը եւ մեր գաղութների արդի հոգեբանութիւնը յիշեալ երեք անձանց պարզեւատրելու հետ միասին պարզեւատրուէին նաեւ. (յիշում է անուն ազգանունները), որոնք նոյնպէս ազգի վաստակաւոր մշակներ եղած են եւ այսօր էլ դեռ շարունակում են կարելին անել յօգուտ մեր դժբաղդ ժողովուրդին»

Նոյն գրութեան մէջ միջնորդել է նաեւ այլ երկու հոգու համար, որոնցից մեկը Քէնթրբերի արքեպիսկոպոսն է «նոյն շքանշանը պիտի խնդրեմ նաեւ Քենթրբերի արքեպիսկոպոսին համար, որի ու նեցած օգտակարութիւնը յօգուտ մեր դատի ու համակրանքը հանդէպ մեր եկեղեցու շատ մեծ են. Քենթրբերի արքեպիսկոպոսը լինելով անգլիական կայսրութեան մէջ երկրորդ անձը, թագաւորից յետոյ, իր բոլոր հեղինակութեամբ ցարդ արել է մեր դատին համար կարելին եւ նրա ապագայ օժանդակութիւնը նոյնպէս անհրաժեշտ է մեզ համար»:

Հայրապետական շքանշանին խոշոր նշանակութիւն տուող ու այսպիսի միջնորդութիւններ յարուցանող եւ Քենթրբերի արքեպիսկոպոսի բարձր հեղինակութեան եւ օգտակարութեան մասին այսպէս յայտարարող Աբել նախկին վարդապետ Նազարեանը, այսօր «Ինչո՞ւ հեռացա» գրքոյկում, ի միջի այլոց չաւրամտութեամբ, գրում է որ Հայ եկեղեցին «Օրհնութեան կոնդակներ ուղարկեց Եւրոպային եւ հայ բախտախնդիրներին» գիտնալով հանդերձ որ նոքա հայ աշխատաւոր մասսաների դիակները իրենց պատուանդան դարձնելով քաղաքական բարձր դիրքերի էին ձգտում», (երես 14), «Օրհնութեան կոնդակ եւ շքանշաններ էր բաժնում Եւրոպայի իր («հարազատներին»), որոնք մի քանի հացկատակ ու անարժէք եւրոպացիների հետ միացած 10 տարի Եւրոպական միջամտութեան ետեւից եղան...» (երես 17):

Իսկ իր տեղեկագրի մէջ իր «Արտաքին քաղաքական աշխատանք»ից նկարագրում է իր ակտիւ մասնակցիլը միտինգներին, կատարած մեծ դերը, եւ իր տւած հեռագրներն ու դիմումները «խաղաղութեան վեհաժողովի անդամներին, կառավարական շրջանակներին, Պարլամենտի կուսակցութեանց վարիչներին եւ բարձր կղերին»:

Բերենք վերջին քաղուածքն եւս Աբել Նազարեանի տեղեկագրից որ հետեւեալն է.

«Մի ուրիշ հարցի մասին էլ հարկ եմ համարում

իշել մի քանի խօսք. ըստ խորէն Սրբազանի ասու-
թեան, լուրեր են պատուած մեր միաբանութեան մէջ,
որ ես իբր թէ թողնելու եմ վարդապետական կոչումս:

«Վեհափառ Տէր, դուք ինձ բաւական ժամանակէ
ի վեր ճանաչում էք, որով յոյս ունիմ թէ՛ այսպիսի
անկիմն կամ թերեւս դիտումնաւոր խօսակցութիւն-
ների կարեւորութիւն չէք տայ: Պիտի ասեմ որ շատ
չը դարմացայ, երբ խորէն Սրբազանէն այդ լսեցի,
քանի որ նման լուրեր գոյութիւն ունէին իմ ձեռնա-
դրութեան առջին օրից: Սակայն եթէ վարդապե-
տութիւնը թողնող լինէի, հիմայ շատոնց թողել էի:
Յաւալին միայն այն է, որ մեր միաբանակից եղբայր-
ների մէջ էլ, ըստ երեւոյթին, շատ քչերն ունին ճիշտ
ըմբռնումն վարդապետական կոչման մասին: Այնպէս
որ այս խնդրոյ մասին, որը գոյութեան ոչ մի իրա-
ւունք չունի, չեմ ուզեր աւելի երկար կանգ առնել,
որպէսզի Ձերդ Վեհափառութեանը իզուր տեղ ձանձ-
րոյթ պատճառած չը լինիմ»:

Այս բնորոշ քաղուածը պարզ ցոյց է տալիս, որ
Աբել նախկին վարդապետ Նազարեանը իր հրաժար-
ուելուց երկու տարի առաջ դեռ ոչ անհատական—ըն-
տանեկան եւ ոչ էլ մանաւանդ սկզբունքային առիթ
կամ պատճառ է ունեցել կամ ըստ իր «վերջիվերջոյ»
ներից ոչ մէկը դեռ «գոյութեան իրաւունք չէ ունե-
ցել» հոգեւոր կոչումից հեռանալու համար, եթէ ոչ,
ինքնաբերաբար յիշեալ տողերը գրելը վարդապետա-
կան կոչումն այսպէս «լաւ ըմբռնողի» կողմից, առ-
նուազն, կեղծիք պիտի համարել:

Բաւական է: Այլեւս միանգամայն աւելորդ ենք
համարում նման քաղուածներ բերելը: Այստեղ դնում
ենք Աբել Նազարեանի հրաժարագիրը, նոյնութեամբ,
որի մէջ որոշակի շեշտել է իր հեռանալու իսկական
դրդապատճառները:

Լոնտոն, 5 Փետրւարի 1923 թվի

Նորին Ս. Օծութեան Տ. Տ. Գէորդ Ե. Վեհափառ
եւ Սրբազնազոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Հոգեկան երկարատեւ մի պայքարից յետոյ, այս-
օր ամենայն լրջութեամբ գալիս եմ յայտնելու Ձերդ
Վեհափառութեան, որ հրաժարում եմ եկեղեցական

կոչումից: Կրօնաբարեւում եմ, որովհետեւ սիրում եմ մէ-
կը, որին որոշած եմ ցմայ պատկանիլ:

Թող ազգն ու Ձերդ Վեհափառութիւնը ներողա-
միտ լինին, որ միայն այսքան կարողացայ ծառայել
որպէս հայ եկեղեցական:

Հայ քրտնաթոր եւ տառապեալ ժողովրդին իմ այս
նոր կեանքում ծառայելու յոյսով, մնամ Ձերդ Վեհա-
փառութեան խոնարհարար՝

Ա.Բ.Ե.Լ. ՆԱԶԱՐԵԱՆ

(նախկին Մ. վարդապետ) միաբան Ս. Էջմիածնի

Շատ որոշ է ասել: «Ամենայն լրջութեամբ» ճշմա-
րիտը խոստովանել եւ այլեւս ոչ մի կասկածի տեղ
չի թողել, այն է՝ հրաժարում է եկեղեցական կոչումից
որովհետեւ սիրում է մէկին, որին որոշած է մինչեւ
իր մահը պատկանիլ:

Նոյնպիսի հաւատարմութեան ուխտ եւ երդում է
տուել իր ձեռնադրութեան ժամանակ: Միայն երեւում
է հրաժարագրից որ մի փոքր անյարմարութիւն, կար-
ծես, մինչ իսկ ամօթ է զգացել, ուստի եւ ազգի եւ
Վեհափառ Հայրապետի ներողամտութիւնն է հայցում:

Այն թէ՛ ինչո՞ւ եւ ի՞նչպէս կեռացաւ Աբել Նա-
զարեանը: Ինչպէս այս հարցը պարզ էր, եւ է, նոյպէս
էլ շատ պարզ է եւ մանաւանդ հասկնալի ամենքի
համար թէ՛ ինչո՞ւ. նա ստիպուած է կամ «պարտք է
համարել», յատկապէս այժմ, «ամբողջ հոգով» յարձա-
կուելու եւ հայհոյելու Հայոց եկեղեցին, Էջմիածինն
ու հայ հոգեւորականութիւնը, որոնց շատագոյն է
եղել միշտ, «մինչեւ Լոնտոնից ծածկաբար հեռանա-
լու» օրը (1923 փետրւար 5-ը) կամ աւելի ճիշտ՝ մինչեւ
Երեւան գալը:

Միայն ի դուր տեղ Աբել Նազարեանն ընտրել է
բարոյական սայթաքումների ուղին եւ այդ ամենը
կապել իր հոգեւոր կոչումից հեռանալուն հետ, քանի
որ, ա՛յդ՝ միանգամայն պարզ հարցից անկախ եւս,
կարող էր, եւ մա՛նաւանդ այսուհետեւ կարող է, բոլո-
րովին ազատ ու անկաշկանդ հայհոյել ու զրպարտել,
«բարձր սկզբունքները» ու «քննադատութեան» ան-
ուան տակ, համոզուած լինելով, որ այլեւս պատաս-
խանի չի արժանանալու Էջմիածնի միաբանութեան
կողմից:



«Ազգային գրադարան»



NL0170287

